ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 2, 1964 Общественные науки

Լուսիկ Մկրտչյան

# ՀԱՅ ԿՆՈՋ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ՀԻՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ

Հայտնի են բազմաթիվ հայ կին գործիչներ, որոնք դեռևս հին դարերից ելկած, ակտիվ մասնակցություն են ունեցել երկրի շինարարության և հայ մշակույթի զարգացման գործում։

Պահպանվում են մեծ թվով հայկական հուշարձաններ, որոնցով հայ կինը հաստատում է իր մասնակցությունը շինարարական աշխատանքներին. դարերի խորքից մեզ հասած բազմաբովանդակ հուշարձաններ, հավերժացնում են այդ կանանց անունները և ցույց տալիս նրանց կատարած արժանահիշատակ գործերը հայկական հին ճարտարապետության մեջ։

Կին ճարտարապետ, բառի իսկական իմաստով, 5—12-րդ դարերում դրվար է գտնել, բայց հայ կինը այդ դարերից էլ առաջ իր գործուն մասնակցությունն է ունեցել շինարարության ասպարեզում, նա իր նյութական ու բարոյական օժանդակությունն է բերել հայկական ճարտարապետության զարգացման գործին։

Հայ կինը ոչ միայն միջոցներ է տրամադրել կառուցումներին, այլև խորհրդատու է եղել վարպետներին, նորաձևություններ է մտցրել կառուցումների մեջ և իր անմիջական հսկողությունն է ունեցել շինարարական աշխատանքներում։ Խոսելով հայ կնոջ այդ դերի մասին, բանասեր Վ. Հացունին գրում է. «Նա կերևի մերթ գործակից ու խրախուսիչ ամուսնուն կամ զավակաց յուր անձնական կարողությամբ, կամ օժտով զոր բերած էր հայրենի տնեն, և մերթ միայնակ, ապավինված յուր կորովուն ու քսակին, որ իրավունք կուտար ասպարեզին մեջ հանդիսացող կանայք աղնվական հարստեր լինեին։ Բայց Ի.բբեմն նրանց մրցակիցներ, կտեսնենք պարզ քաղաքացիներից ևս, որոնք կցուցանեն եթե ոչ արյան, այլ սրտի և հավատո աղնվականություն մը, և իրենց կարողության չափով կթողուն նման հիշատակներ»[1]։

Այդ դարերում եկեղեցաշինությունն ընդհանուր և հրամայողական պահանջ է եղել, ուստի հին հայկական լայնածավալ երկրում կառուցվել են բազմաթիվ եկեղեցիներ, որոնք այսօր դիտվում են որպես հայկական հին ճարտարապետության հուշարձաններ, որոնց վրա իր կնիքն է դրել հնադարյան հայ ճարտարապետը և նրան համընթաց քայլող հայ կինը։

Հայ կինն էլ իր շինարարական գործունեությունն սկսել է եկեղեցիներով, այնուհետև ձեռնամուխ եղել աշխարհիկ շենքերի կառուցման աշխատանքներին։ Նրա անմիջական մասնակցությամբ և կամ նրա մեծածախս օժանդակությամբ կառուցվել են եկեղեցիներ, հյուրանոցներ, հիվանդանոցներ, գրատներ, ջրմուղներ, կամուրջներ, բերդեր, աշտարակներ և այլն։ Քավության և բարեպաշտության հոգին նրանց թելադրել է այդ «բարեպաշտական» տների

---

1 Վ. Հացունի, Հայուհին պատմության առջև, Վենետիկ, 1936, էջ 215։

կառուցումը, հանուն «բարեխոսութեան վասն հոգւոյ» կամ «քաւութիւն վասն մեղաց» ապահովելու համար։

Կանանց շինարարական գործունեության մասին պատմում են ոչ միայն մեր պատմիչներն, այլև հնագարյան խաչքարերն ու հուշարձանները։

Ըստ Սյունյաց պատմիչ Ստ. Օրբելյանի, առաջին կին շինարարը եղել է Վարազդուխտ տիկինը, որը «յառաջ քան զհայոց թուականն» կառուցել է իր նահանգի Սյունի Վանաց եկեղեցին, «Նորակերտ ձևով, գմբեթահարկ խորան երկնանման»[2]։

Վրաստանի Բոլնիս «Սիոն» եկեղեցին, որը նույնպես հայ կնոջ մտքի ծնունդ է, կառուցվել է 5-րդ դարում Արշիլ թագավորի որդի Միհրդատի կին և Ռանի էրիստավ Բարլաբադի դուստր Սանդուխտի հրամանով[3]։

Բագարանի կաթողիկե եկեղեցին կառուցվել է 624 թ., ճարտարապետի անունը մեզ չի հասել, բայց շինարարական և ձևավորման աշխատանքները կատարվել են Բրտի և նրա կին՝ Աննայի հանձնարարությամբ, իսկ ամուսնու մահից հետո շինարարության գործի հսկողությունը կատարել է ինքն Աննան և այն ավարտել 628 թ.։ «Յետ երից ամաց մահուան Բրտին կատարեաց զսուրբ եկեղեցին Բրտին ամուսին»[4]։

Շիրակի Անանիա եկեղեցին, որը գտնվում է Ալման գյուղում, կառուցվել է 637 թ.։ «Ես Գրիգոր Եղսուտս եւ Մարիամ իմ կին շինեցաք զսուրբ եկեղեցիս վասն մեր հոգւոց»[5]։ Այս եկեղեցին, ըստ մեր պատմիչների, հայ ճարտարապետության հնագույն օրինակներից է։ Նրանից ոչ պակաս հին և ճարտարապետության համար հետաքրքիր օրինակ է Մամիկոնյան Գրիգորի «Եւ Հեղինէի նորին զուգակցի» կառուցած Արուճի կաթողիկեն, որը կառուցվել է 669 թ. և կոչվել է «Տաճար փառաց»[6]։

Սյունյաց Գաբուռն Վասակ իշխանի կին Մարիամը, ամուսնու մահից հետո, 874 թ. Սևանի կղզում կառուցել է տվել վանք։ Այդ եկեղեցին կառուցվել է Եղվարդցի Մաշտոց վարդապետի հսկողությամբ, իսկ Մարիամը հսկել է նրա ամեն մի քարի դրվածքին և մեծ գումարներ ծախսել այդ շինարարության վրա։ Ի դեպ մի բնորոշ մանրամասնություն. շինարարության ավարտումից հետո, երբ վանքը գործել է որպես աղոթատուն, Մարիամին որպես իգական սեռի ներկայացուցչի արգելվել է մուտք գործել այնտեղ։ Նա ստիպված կառուցել է մի փոքրիկ դուռ խորանի կողմից և չերևալով տղամարդկանց, հետևել է ժամերգությանը[7]։

Շապուհ Բագրատունին տեսնելով քրոջ եռանդուն գործունեությունը շինարարության բնագավառում, Մարիամին նշանակում է իր կողմից կառուցվելիք Վանեվանի ս. Լուսավորիչ եկեղեցու վերակացու և տեսուչ. «...Ես Շապուհ Բագրատունիս... մեծափարագ տենչանօք վերակացու և տեսուչ առնելով զքոյր իմ Մարիամ Սիւնեաց տիկին, յիմումս իշխանութեան ի Վանեվանս տուն Աստուծոյ կանգնեալ վիմատաշ կոփածովք շատածախ գանձիւք և մեծա-

2 Տե՛ս նույն տեղում, էջ 216։

3 Ե. Լալայան, Ազգագրական հանդես, Թիֆլիս, 1901, էջ 432։

4 Նույն տեղում։

5 Ղ. Ալիշան, Շիրակ, Վենետիկ, 1881, էջ 125։

6 Վ. Հացունի, Հայուհին պատմության առջև, էջ 147։

7 «Ազգագրական հանդես», 1908, № 1 էջ 57—58։

ջան վաստակովք կատարեալ...»[8]։ Այդպես է Շապուհ Բագրատունին արտահայտել իր գոհունակությունը քրոջ կատարած ծանր ու պատասխանատու աշխատանքի համար։

910 թ. Սյունյաց տիկին Շուշանը կառուցել է տվել հինգ եկեղեցի, որոնց կառուցումները կատարել է ամուսնու թողած գումարով, ինչպես նշել է նա. «...Տէրն իմ երանելին Աշոտ աշխատութեամբ շինեալ էր զսուրբ եկեղեցիքն...»[9]։

Հաղբատի և Սանահնի վանքերը 10-րդ դարում հիմնադրել են Աշոտ Ողորմած թագավորն ու նրա կին Խոսրովանուշ թագուհին։ Սակայն շինարարական աշխատանքներով զբաղվել է միայն Խոսրովանուշ թագուհին, այդ պատճառով էլ հիշատակարաններում ու կառուցված շենքերում Խոսրովանուշի անունն է պահպանվել։ «Ի ԾԺԶ թուին շինեցաւ Հաղպատ և Սանահինն երեք ամաւ առաջ քան զՀաղպատ, շինեցաւ ի Խոսրովանոյշ թագուհւոյն ի կնոջէ Աշոտոյ Շահնշահի»[10]։

Լեոն իր «Հայոց պատմությունում» գրում է, որ Հաղբատի վանքը 967 թ. կառուցել է «Աշոտի ամուսին Խոսրովանուշ հայոց տիկինը։ Նույն տիկնաց տիկինն էր, որ 10 տարի առաջ շինել էր Սանահնի նույնպես հռչակավոր վանքը»[11]։ Սակայն ըստ Կ. Ղաֆադարյանի Հաղբատը կառուցվել է 976 թ., իսկ Սանահինը՝ 966 թ.[12]։

Սյունիքի թագուհի Շահանդուխտի ձեռքով 10-րդ դարում կառուցվել է Որոտնա վանքը, որը հետո լրացվել է 11-րդ դարում։

10-րդ դարում կառուցվել է Անիի կաթողիկե մեծ եկեղեցին, որի ճարտարապետն է եղել մեծահամբավ Տրդատը։ Եկեղեցին հիմնադրել է Սմբատ թագավորը (976—989 թթ.), իսկ նրա մահից հետո շինարարության գործը ղեկավարել է Կատրամիդե թագուհին։ Ահա արձանագրությունը. «1001-ին... ես Կատրամիդէ հայոց թագուհի, դուստր Վասակայ Սիւնեաց թագաւորի, յողորմութիւն Աստուծոյ ապավինեցայ շահանշահի, շինեցի զսուրբ Կաթողիկէս, զոր էր հիմնադրեալ Մեծին Սմբատայ եւ կանգնեցաք տուն Աստուծոյ...»[13]։

Երբ Կատրամիդեի ճաշակով և ղեկավարությամբ կառուցված Անիի հռչակավոր կաթողիկեն վեր է խոյացել սյարիսպներից էլ շատ ավելի բարձր, այդ տեսնելով հովիվը դաշտում իր ուրախությունն է հայտնել կնոջը և ռամիկի պարզությամբ հրամայել, որ նա գնա և աղոթի։ Բայց նրա ուրախությունը երկար չի տևել, որովհետև վերջինիս կնոջն անարժան համարելով, ներս չեն թողել. հովիվը հասկացել է, որ այդ սքանչելագործ կոթողը կառուցվել է ոչ իրենց համար և նա վրեժի ցասումով լցված հայացքը ուղղել է դեպի արքայական բարձրաբերձ պալատները և բողոքել. «Արքա հզոր, ես խեղճ հովիվս պիտի խորտակեմ քո անբարտավանությունդ, դու հարստությունով, մեծությունով և զորությունով կհպարտանաս, ես շնաշխարհիկ ճաշակովս պիտի խորտակեմ քո գոռոզ գլուխը, ես էլ պիտի կառուցեմ մի տաճար քո դիմաց, թեև փոքրիկ,

---

8 Ս տ. Օ ր բ ե լ յ ա ն, Պատմութիւն տան Սիսական, էջ 182։

9 Նույն տեղում, էջ 236—237։

10 Սամուել քահ. Անեցւոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, էջ 100։

11 Լ ե ո, Հայոց պատմություն, հատ. 2, Երևան, 1947, էջ 599։

12 Կ. Ղ ա ֆ ա դ ա ր յ ա ն, Հաղբատ, Երևան, 1963, էջ 10—13։

13 Ղ. Ա լ ի շ ա ն, Շիրակ. 1881, Վենետիկ, էջ 67։

բայց բոլոր փառքովդ պիտի նախանձես նրան, մարդիկ քո կառուցած վիթխարի զանգվածի առջև պիտի ապշին ու սոսկան, և նրա խրոխտ գլուխը շուտով պիտի խոնարհի և սիրտդ ու հոգիդ պիտի թաղե իր փլատակների տակ, սակայն իմ հանճարիս համեստ կոթողը մշտավառ աստղի պես գարուց ի դարս պիտի փայլի...»[14]։

Եվ հովիվն ու իր կինը կառուցում են մի փոքրիկ եկեղեցի, ավելի ճիշտ տապանատուն, որի ճարտարապետության նշանակության մասին ճարտարապետ Թ. Թորամանյանը նկատել է. «Կարելի է ըսել այդ մատուռ կգերազանցե Անիի բոլոր մեծ ու փոքր հիշատակարանները... որը համաշխարհային ճարտարապետության մեջ իր նախորդը չունենալեն զատ, իր ետնորդը հազիվ տեսնվեցավ ԺԵ—ԺԶ դարերու գոթական արվեստի մեջ»[15]։

914 թ. Գագիկ Արծրունի թագավորի կին Մլքե թագուհին Վարագում կառուցել է տվել Աստվածածին եկեղեցին և դրել տվել իր հայտնի ավետարանը, որը լի է մանրանկարչական մեծարժեք նկարներով։ Ահա եկեղեցու արձանագրությունը. «Ըմ ձեռամբս... եմ շինեալ յաւգնականութիւն ինձ եւ արքային իմոյ Գագկայ եւ զաւակաց իւրոց»[16]։ Այս եկեղեցին ունեցել է գոթական սրաձև կամար, որ չի ունեցել մինչ այդ եղած և ոչ մի եկեղեցի։ Դրա համար էլ ճարտարապետներն այն դիտել են որպես նոր երևույթ այդ դարի համար։ Այդպիսի ոճով երկրորդ եկեղեցի Անիում երևացել է միայն 70 տարի հետո։ Վասպուրականի թագուհի Խուշուշ խաթունը, Մլքե թագուհու օրինակին հետևելով, նրա կառուցած եկեղեցու կողքին 981 թ. կառուցել է տվել «Ս. Սոփիա Տաճարս վասն փրկութեան հոգւոյս և ննջեցելոյս...»[17]։

Շուշիկ Պահլավունին նույնպես շինարարական գործերում հետ չի մնացել մյուսներից։ Ամուսնու մահից հետո 986 թ. հիմնադրել է Մարմաշենի եկեղեցին և այն ավարտել 1025 թ.[18], իսկ հետո ձեռնամուխ եղել մի շարք այլ շինարարական կառուցումների։

Զաքարե և Իվանե սպասալարերին մլած երկարատև պատերազմներն ու հաղթական արշավանքները նպաստել են նրանց և մյուս զորավարներին կուտակելու մեծաքանակ հարստություն, որը և հնարավորություն է տվել նրանց ծավալելու շինարարական մեծ գործունեություն, և նրանք, ինչպես և նրանց ժամանակակից իշխանները և իշխանուհիները, հետևելով միմյանց օրինակին, կառուցել են տվել ոչ միայն եկեղեցիներ, այլև պալատներ, բերդեր, աշտարակներ, գրատներ, իջևանատներ, բաղնիքներ, վանքերին կից ուսումնարաններ, ջրմուղներ, ջրամբարներ և սալահատակված ճանապարհներ և այլն։

Հ. Մանանդյանը նշելով այս շրջանի շինարարական աշխատանքների մեծ թափը, միաժամանակ ցույց է տվել Զաքարյանների կանանց ու դուստրերի ակտիվ գործունեությունը շինարարության մեջ, և նրանց ջանքերով կառուցված այն մեծ թվով կոթողները, որոնցով հարստացել է հայկական հին ճար-

---

14 Թ. Թորամանյան, Դեղունի, № 6, 1909, էջ 35։

15 Նույն տեղում։

16 Ղ. Ալիշան, Շիրակ, Վենետիկ, 1881, էջ 67։

17 Վ. Հայունի, Հայուհին պատմության առջև, էջ 227։

18 Նույն տեղում։

տարապետությունը։ Կանանց գործունեության մասին Հ. Մանանդյանը գրում է. «Առանձնապես ուշագրավ է, որ այս շինարարությանը մեծ չափով մասնակից են եղել, ինչպես երևում է վիմական արձանագրությունների վկայություններից, հայ իշխանների կանայք և դուստրերը։ Այսպես, օրինակ, Կյուրիկե Բ-ի դուստրերը՝ Իվանե Օրբելյանի կին Ռուսուդանը, Խաչենի Հասան իշխանի կին Մամքանը և սրանց քույրերը՝ Մարիամը, Վանեն և Բորինան հայտնի են իրենց շինարարական գործերով Քոբայրի, Հաղբատի, Սանահնի, Խութա և այլ վանքերի մեջ»[19]։

Կյուրիկե (Գուրգեն) թագավորի երեք դուստրերը՝ Մարիամը, Բորինան և Ռուդուքան (կամ Ռուսուդան) կառուցել են Սանահնի վանքի գավթի երեք սյուները հոյակապ կամարներով, որոնք ճարտարապետության լավագույն օրինակներից են։ Մարիամը 1153 թ. կառուցել է տվել և Քոբայրի եկեղեցին[20]։

Դեսումյանց Հասան իշխանի դուստր՝ Խաթունը Հաղբատում 13-րդ դարում կառուցել է տվել մի եկեղեցի, որը ճարտարապետության մեջ համարվում է մեծարժեք կառուցում և հազվագյուտ օրինակներից մեկը[21]։

1214 թ. Քրդի դուստր, Վախտանդի կին Արղու խաթունի ձեռքով կառուցվել է Դադի վանքի գլխավոր եկեղեցին[22]։ Ումեկ իշխանի կին Թագուհին 1251 թ. Տփղիսում կառուցել է տվել ս. Գևորգ եկեղեցին[23]։

1313 թ. Չինաստանի Ջուանչու քաղաքում ապրել են հայեր, ուր մի հայ տիկին կառուցել է տվել և կաթոլիկ արքեպիսկոպոսին նվիրել մեծարժեք եկեղեցի, որն օգտագործվել է որպես մայր տաճար։ Այդ նույն հայուհին հոգևորականների ապրելու համար շինել է տվել շենքեր և այդ շենքերի հետագա վերանորոգման համար նույնիսկ թողել մեծ գումար[24]։

Հաղբատում 1195 թ. կառուցվել է և Ջգրաշեն եկեղեցի՝ Սելամա անունով տիկնոջ կողմից[25]։ Ըստ Հակոբ երեցի արձանագրության, 1317 թ. Աշտարակում, Զաքարե Սպասալարի թոռան թոռ Աղբուղայի կին Սիթի խաթունը կառուցել է մի եկեղեցի[26]։ Ջուխտակ եկեղեցին, որը գտնվում է Դիլիջանից Կիրովական տանող ճանապարհից 3 կիլոմետր հեռու, անտառում, շինել են Դալիտան և Խատուրը, քույր և եղբայր, այդ պատճառով էլ եկեղեցին Ջուխտակ է կոչվել։

Կանայք մեծ եռանդով ձեռնամուխ են եղել նաև հիվանդանոցային շենքերի կառուցման աշխատանքներին։ Նրանք ոչ միայն մեծ գումարներ են ծախսել այդ տների կառուցման վրա, այլև իրենց անմիջական մասնակցությունն են ունեցել կառուցման աշխատանքներին։ Այսպես՝ 967 թ. Հաղբատում Աշոտ Ողորմած թագավորի կին Խոսրովանուշ թագուհին մի շարք կառուցումների հետ կառուցել է տալիս նաև հիվանդանոց,— «դարմանատուն» և անձամբ հսկել հիվանդներին, որոնց մեջ եղել են և բորոտներ։

---

19 Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատ. 3, Երևան, 1952, էջ 166—167։

20 Վ. Բարձրբերդցի, էջ 122։

21 Կ. Ղաֆադարյան, Հաղբատ, Երևան, 1963, էջ 60—62, 220։

22 Տ. Տեր-Մովսեսյան, Հայկական երեք վանքեր Երուսաղեմում, 1938, էջ 84։

23 Գ. Հովսեփյան, Նյութեր և ուսումնասիրություններ, էջ 9—10։

24 Դերենիկ եպիսկ. Չինաստանի վաճառականներ, «Սիոն», 1959, № 8—9, էջ 276։

25 Կ. Ղաֆադարյան, Հաղբատ, էջ 237։

26 Վ. Հացունի, Հայուհին պատմության առջև, էջ 233։

Այդ նույն ժամանակաշրջանում հիվանդատներ ու որբախնամ տներ է կառուցել տվել նաև Տիկնաց տիկին Շուշիկը և զբաղվել է բուժման աշխատանքներով, որի մասին հիշատակել է նրա թոռը՝ Գրիգոր Մագիստրոսը[27]։

Հետևելով բուն Հայաստանում կատարվող օրինակներին, Կիլիկիայի թագուհի Զապելը նույնպես ձեռնարկում է մի շարք կառուցումներ։ Նա կառուցել է տվել որբախնամ տներ, ծերանոց և հիվանդատներ։ Այս մասին կիլիկյան հիշատակագիրը գրում է. «Գոդեաց տունս ի Սիս հիւանդանոց մի...» և բերում է արձանագրությունը. «Յարմարումն շինուածոյ հիւանդանոցիս քրիստոսասէր թագուհւոյ Զապելի ի թուին հայոց ՈՌ (1241 թ.)»[28]։

Միջնադարում, երբ զարգանում են ու տարածվում քաղաքները և լայն ծավալ է ստանում առևտուրը, մեծ ճանապարհների վրա, քաղաքներում ու գյուղերում կառուցվում են և քարավանատներ ու հյուրանոցներ։ Բազմավաստակ ճարտարապետ Թ. Թորամանյանը այս մասին գրել է. «Պատմական ակնարկներից և մեզ հասած արձանագրություններից գիտենք, որ բազմաթիվ հաստատություններ կային օտարանոց, ասպնջականոց, հյուրանոց, իջևան և այլ անուններով, որոնք մեծ մասամբ ծառայում էին օտարական ճանապարհորդների, աղքատ անցորդների... համար»[29]։

Այս կարևոր գործում հայ կինը հանդես է եկել ոչ միայն որպես նվիրատու, այլև «ինքն հիմնադիր հյուրանոցաց»[30],—գրում է բանասեր Վ. Հացունին։ Կանայք մեծ նվիրատվություններ են արել այդ տների տնտեսական հիմքի ամրապնդման համար։ Այսպես, Մինա խաթունը 1274 թ., Սյունյաց Եղեգիք ավանում, իր ամուսին Տարսայիճի հետ կառուցել են տվել մի հյուրանոց, և այդպիսի մի հյուրանոց էլ կառուցել են Նոր Ավանում ու ապահովել հողամասով։

1317 թ. Հակոբ երեցն արձանագրել է, որ Զաքարե Սպասալարի թոռան թոռ պարոն Աղբուղայի և նրա կին Սիթի խաթունի ծախսով Աշտարակում կառուցվել է մի հյուրանոց[31]։

1332 թ. Վայոց ձորում հյուրանոց կամ «հոգետուն» են կառուցել Խորիշահ դուստր Վարդան իշխանի, կին Ջեսարի, հետո այդ կոչվել է Սելիմի կարավանատուն[32]։

Հայ կինը զբաղվել է նաև ձեռագրեր ընդօրինակելու ծանր ու մեծ հմտություն պահանջող աշխատանքով, ինչպես և այդ ձեռագրերի հավաքման ու պահպանման, գրչության օջախների կառուցման աշխատանքներով։ Նա իր կարողության համեմատ (հարուստներն իրենց նյութական միջոցներով, աղքատներն իրենց աշխատանքով), ակտիվ մասնակցություն են ունեցել հայ մշակույթի օջախների կառուցմանը, սիրել ու պահպանել են հայկական հուշարձանները։ Այդ գրատների շնորհիվ է, որ որոշ վանքերում, հակառակ սոսկալի ավերի ու ավարառությունների, այնուամենայնիվ, պահպանվել են և մեզ հասել արժեքավոր ձեռագրական ժողովածուներ սկսած 10-րդ դարից։

---

27 Կ. Կոստանյան, Գրիգոր Մագիստրոսի թղթերը, էջ ԺԷ։
28 Վ. Հացունի, Հայուհին պատմության առջև, էջ 235։
29 Թ. Թորամանյան, Նյութեր հայ ճարտ., հատ. 1, էջ 97։
30 Վ. Հացունի, Հայուհին պատմության առջև, էջ 233։
31 Նույն տեղում։
32 Հ. Աճառյան, Հայոց անձն. բառ., Երևան, 1944, էջ 546։

Այսպես՝ 1063 թ. Դավիթ արքայի դուստր Հրանուշ թագուհին Սանահնում կառուցել է տվել գրատուն և այն հատկացրել է նշխարներ և մատյաններ պահելու համար։ Գրատունը բաղկացած էր երեք կարգ սյունազարդ խորշ կամարներից և յուրաքանչյուր սյունը կերտված էր մի ամբողջ քարից. «Ի ՇԺԲ թուին հայոց... ես Հրանուշ թագուհի՝ դուստր Դաւթի արքայի, շինեցի զնշխարատունս եւ զեկեղեցիս եւ ետու զնորաշենքս ի Սանահինս, վասն իմ մեղաց...»[33]։

1277 թ. Սեդա անունով մի կին, իր ամուսնու հետ միասին, հավաքած գումարներով կառուցել է տվել նշխարատուն և եկեղեցու հատուկ դուռը, որի կառուցողն է եղել Կարնեցի ֆրեր վարպետը. «թվ. ՉԻՉ... ես Առիւծս հոդեւ... Սարգսի որդիս եւ կենակից իմ Սէդա շինեցաք ի մեր հալալ արդեանց զնըշխա/բա/տունս ի մեր ժամատան դուռս յիշատակ ծնողաց մերոց...»[34]։

Մամախաթունը և նրա ամուսին Վաչեն 1229 թ. կառուցել են նշխարատուն և Հոռոմոսի վանքը[35]։

Խորիշահ Մամիկոնյանը, դուստր մարզպան Մամիկոնյանի, կին Քուրդ իշխանի (Արագածոտն), ամուսնու հետ միասին, 1235 թ. կառուցել է Սաղմոսավանքի գրատունն ու մատուռը, իսկ 1250 թ.՝ Հովհաննավանքը՝ ի հիշատակ իրենց վաղամեռիկ դուստր Մամախաթունի[36]։

Ինչպես մյուս շինարարական հարցերում, այնպես էլ ջրմուղների շինարարության գործում կանայք մեծ ջանասիրություն են հանդես բերել։ Առյուծ հոգևորանց Սեդան, 1251-ին վերակառուցում է Հոռոմոսի վանքի ջրմուղը, որը ավերվել էր թաթարների կողմից[37]։

1310 թ. շահնշահ Ռ. Աթաբեկի պաշտոնյան Մաթեն և նրա կին Թենին նորոգում են Անիի ս. Գրիգոր վանքի ջրմուղը, որը քանդված է եղել զանազան արշավանքների ընթացքում[38]։

Այնուհետև 1318 թ. Ազիզբեկ և Վախախ ամուսինները ձեռնարկել են Եղվարդի ջրմուղի վերանորոգումը։ Նրանք ջուրը բերել են Արարատյան լեռներից, հասցրել Եղվարդ գյուղը. «Ոչ հաշւելով զծախսն, զանհասանելի երկրաչափ հեռաւորութիւն տեղւոյն, շրջապատեալ զլեառն Արարատեան հասուցին զջուրն յորդառատ վտակօք փոյթընկաց յԵղվարդ, զգնացս ջրոյն»,— գրում է հիշատակագիրը, չթաքցնելով իր զարմանքը նրանց առատաձեռնության վրա և միևնույն ժամանակ ավելացնում, որ այդ շրջանում, մինչև ջրմուղի կառուցումը, սարսափելի չորային է եղել, անգամ մարդիկ խուսափել են այդ կողմերով ճանապարհորդել։ Իսկ այդ ջրով «նորափետուր զարդարեցան և զվարճացան ամենայն կենդանիք, մարդ եւ անասուն, բայց ի գին ծանր դրամոց այսպէս, որ զտուրս արուեստաւորացն եւ զամենայն ծախսն ո՞վ կարէ ընդ զրով արկանել»[39]։

Հայրենիքի պաշտպանության գործն իր կնիքն է դրել հայկական ճարտարապետության վրա։ Այդ գործից հեռու կանգնած չի եղել և հայ կինը, որը

33 Կ. Ղաֆադարյան, Սանահնի վանքը և նրա արձանագրությունները. 1957, էջ 187։
34 Ղ. Ալիշան, Շիրակ, Վենետիկ, 1881, էջ 25։
35 Կ. Ղաֆադարյան, Հովհաննավանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1948, էջ 82։
36 Հ. Աճառյան, Հայոց անձ. բառ., հատ. Բ, 1944, էջ 545։
37 Վ. Հացունի, Հայրենի պատմության առջև, էջ 236։
38 Ղ. Ալիշան, Շիրակ, էջ 79։
39 Ղ. Ալիշան, Այրարատ, էջ 197։

տղամարդկանց հետ միասին կառուցել է բերդեր ու աշտարակներ՝ հայրենիքը օտար ոսոխների ոտնձգություններից պաշտպանելու համար։ Այդ մասին Ստ. Օրբելյանը գրում է. «Մի ոմն ի կանանց նոյն նահապետացն Երնջիկ անուն, շինէ և զանհնարին ամուրն Երնջակ, և իւր անուն բերդն և գաւառն կոչի Երնջակայ...»[40]։

Անիի հռչակավոր ու ամրակուռ բերդերն իրենց պարիսպներով ու աշտարակներով պաշտպանել են կռվող հայ զինվորներին։ Հայուհին ոչ միայն կառուցման աշխատանքներին է մասնակցել, այլև քաջաբար կռվել է ոսոխի դեմ։ Այսպես, Այծամն Անեցին 1125 թ. քաջաբար կռվել է Անիի վրա արշաված Փատլուն ամիրայի զորքերի դեմ «...և էր անուն նորա ըստ արժանի արագութեան իւրոյ, Այծամն կոչեցեալ»[41]։

Ինչպես ճարտարապետական բոլոր կառուցումների բնագավառում, այնպես էլ կամուրջների շինարարության մեջ հայ կինը ցույց է տվել իր ժրաջան գործունեությունը։ Այսպես, օրինակ՝ 1192 թ. Զաքարեի որդի իշխանաց իշխան Սարգսի դուստր և Աբաս թագավորի կին Վանենին կառուցել է Սանահնի նշանավոր կամուրջը Դեբեթ գետի վրա։ Կամրջի գլխին նա կանգնեցրել է մի խաչքար, որը ջարգվել է 1795 թ. Աղա Մահմադ խանի արշավանքի ընթացքում։ Այդ խաչքարն ունի հետևյալ արձանագրությունը. «(ա)ղգին Բագրատունեաց ես Վանենի, դուստր իշխանաց իշխան Սարգսի, որդո Զաքարէի, կին Աբասա թագաւորի, որ կիսաւրէ վախճանեալ խաւարեցոյց զմեզ, շինեցի զկամուրջս եւ կանգնեցի զխաչս յիշատակ նմա եւ մխիթար ինձ եւ ի կեանս ծնողաց եւ եղբարց իմոց...»[42]։ Այդ հոյակապ կամուրջն այսօր 768 տարեկան է։ Դեռևս կես դար առաջ նրա վրայով անցնում էին բեռնավորված ուղտերի կարավաններ, իսկ այսօր անցնում են բեռնավորված ավտոմեքենաներ։ Ճարտարապետական այս հնագույն և միաժամանակ լավագույն օրինակը հայ կնոջ մտահղացման արդյունք է։ Այնուհետև Ասփա անունով մի հայուհի Արցախի Թարթառ մեծ գետի վրա շինել է տվել մի կամուրջ, որը ըստ մեր հետազա պատմագիրների, դեռևս իրենց ժամանակ կանգուն է եղել[43]։

Ներկայացնելով այս հոդվածն ընթերցողի ուշադրությանը, ցանկացել ենք մասնակիորեն ծանոթացնել նրան հայ կնոջ հայկական հին ճարտարապետության բնագավառում կատարած զգալի աշխատանքին։ Ինչպես ճարտարապետ Վ. Հարությունյանն է գրել. «Հայկական ճարտարապետությունը հայ ժողովրդի բազմադարյան և բեղմնավոր շինարարական գործունեության ծանրակշիռ քարե մատյանն է։ Այդ մատյանը բազմաբովանդակ է ու հետաքրքիր, նրա յուրաքանչյուր էջը գրված է ժողովրդի ստեղծագործ ձեռքով և արտահայտում է նրա կյանքն ու հոգեկան հարուստ աշխարհը, կառուցողների բարձր վարպետությունը»[44]։

---

40 Ստ. Օրբելյան, Պատմութիւն տանն Սիսական, էջ 13։

41 Սամուէլ քահ. Անեցւոյ Հաւաքմունք գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 126—127։

42 Կ. Ղաֆադարյան, Սանահնի վանքը..., Երևան, 1957, էջ 185—186։

43 Վ. Հացունի, Հայուհին պատմության առջև, էջ 236։

44 Վ. Մ. Հարությունյան, Միջնադարյան Հայաստանի քարավանատներն ու կամուրջները, Երևան, 1960, էջ 125։

*Այդ քարե բազմաբովանդակ մատյանում հայ կինը նույնպես ունի իր գգալի ավանդը և նրա անունն էլ անջնջելի կերպով արձանագրված է այդ մատյանի էջերում։*

Лусик Мкртчян

## УЧАСТИЕ АРМЯНСКИХ ЖЕНЩИН В СОЗДАНИИ СТАРЫХ АРМЯНСКИХ АРХИТЕКТУРНЫХ СООРУЖЕНИЙ

(Резюме)

Сохранились до нашего времени многочисленные исторические памятники, надписи на которых рассказывают о той значительной роли и активном участии армянок в строительстве ряда архитектурных сооружений.

О первой армянке-архитекторе госпоже Вараздухт упоминает историк Ст. Орбелян: «еще до армянского летоисчисления» она построила в Сюнике церковь Ванац. При активном участии армянок были воздвигнуты не только многочисленные церкви и соборы, и другие архитектурные памятники, но и ряд больничных строений, приюты для сирот и стариков, а также дома для гостей и постоялые дворы («караван-сараи»). Еще в 967 году в Ахбате была построена царицей Хосровануш «дарманатун» (больница).

Строя ряд памятников и основывая дома, служащие разным целям, армянки заботились об их благоустройстве и дальнейшем сохранении. В частности они очень заботились о постройке библиотек и сохранении культурных ценностей—особенно рукописей, в создании которых принимали участие они сами в качестве писцов.

В статье также приводятся факты, подтверждающие актинвое участие армянок в строительстве каналов, водонапорных башен, мостов, а также крепостей с башнями и опорными стенами.